ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արարատի մարզի <<Նիզամու միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի <<կենսաբանության>> (12 դասաժամ), հասարակագիտության (8 դասաժամ), <<կերպարվեստի>> (3 դասաժամ), երաժշտության (3 դասաժամ), <<Ես եւ շրջակա աշխարհը>>, (2 դասաժամ), տեխնոլոգիայի (9 դասաժամ) , ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցակացվում է երկու փուլով ՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին :

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

-դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

-բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ), անձը հաստատող փաստաթուղթ,

-<<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

-ինքնակենսագրություն (Ձեւ 5) ,

-այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

-ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում)

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում:

Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերցնել և համալրել այն:

Փաստաթղթերն ընդունվում են հոկտեմբերի 13-ից մինչև հոկտեմբերի 26-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա հոկտեմբերի 28-ին՝ ժամը 14:00-ին , ՀՀ Արարատի մարզի Նիզամու միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գ. Նիզամի, Ա.Եղիազարյան 37:

Տեղեկությունների համար զանգահարել ՝ 093-40-43-13 հեռախոսահամարով